

3499

ԱՎՍԿԻ

ԿՐՈՆԱԿԱՆ ՄՆԱՑՈՒԿՆԵՐԻ  
ՅԵՎ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԴՐՈ-  
ՊԱԳԱՆԴԻ ՈՒ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ  
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

215

34-47

«ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՇԱՎ»-Ի  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեւան

1937 թ.

09.07.2013

3499

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.



417

37

Կիրովականի տպարան

Գլավլիտի լրագրեր № 481

Գառլիեր № 774

215 Կ.

23 SEP 2009

34-47

ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ

**ԿՐՈՆԱԿԱՆ ՄՆԱՑՈՒԿՆԵՐԻ ՅԵՎ  
ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ  
ՈՒ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ**

Ժամանակակից կոմունիստական շար-  
ժույթն իր զարգացման հենց սկզբից ա-  
թիստական շարժում է: Կոմունիզմի մեծ  
հիմնադիրներ ՄԱՐՔՍԸ և ԵՆԳԵԼՍԸ հան-  
դես եյին գալիս լորպես հետեւողական  
մարտիկներ ամեն տեսակ կրոնական գա-  
ղափարախոսության դեմ: ՄԱՐՔՍԻ «Կրո-  
նը ժողովրդի համար օպիոն է» արտա-  
հայտությունը մտավ կրոնից հեռացած  
միլիոնավոր պրոլետարների գիտակցու-  
թյան մեջ:

ՄԱՐՔՍԻ և ԵՆԳԵԼՍԻ գործի շարունա-



կողմերը՝ ԼԵՆԻՆԸ և ՍՏԱԼԻՆԸ, կրոնը և կրոնական մնացուկները համարելով ժողովրդական մասսաներին կապիտալի ճնշումից ազատագրելու խոչընդոտներից մեկը, իրենց գործունեությունը սկզբից արդեն հետեւողական կերպով պայքարում էին կրոնական գաղափարախոսությունից դեմ:

ԼԵՆԻՆԸ դեռ առաջին հեղափոխությունից ժամանակաշրջանում «Սոցիալիզմը և կրոնը» հոդվածում գրում էր.

«Սոցիալիստական պրոլետարիատի կուսակցության վերաբերմամբ կրոնը մասնավոր գործ չէ: Մեր կուսակցությունը բանվոր դասակարգի ազատագրման համար պայքարող գիտակից, առաջավոր մարտիկների միությունն է: Այդ միությունը չի կարող և չպետք է անտարբեր վերաբերմունք ունենա անգիտակցությանը, խավարամտությանը և խավարամոլորությունըն ի դեմս կրոնական հավատալիքների» (ԼԵՆԻՆ, հ. 8 էջ 421):

Մենք յեղեկ ենք և մնում ենք ամեն մի կրոնի թշնամի: Սակայն մենք միեւնույն

ժամանակ յեղեկ ենք և մնում ենք խղճի ազատութեան կողմնակիցներ: Հենց այդ պատճառով ել խորհրդային իշխանությունն առաջին քայլերից մեկն եր յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց բաժանելու դեկրետի հրատարակումը 1918 թվականի հունվարին:

Հենց այդ պատճառով մենք ապահովեցինք խղճի ազատությունը և պաշտամունքների ազատությունը, չնայած այն քանին, վոր մենք համոզված ենք, վոր կրոնական պաշտամունքների կատարումը շատ ֆեառակար մնացուկ է:

Հենց այդ պատճառով ել մենք ապահովեցինք հակակրոնական պրոպագանդի ազատությունը բոլոր քաղաքացիների համար:

Մեր կոմունիստական կուսակցության ծրագրի մեջ ասված է.

«Կրոնի վերաբերմամբ Համ Կ (բ) Կ-ն չի բավարարվում յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց արդեն դեկրետով բաժանելով, այսինքն՝ այն միջոցառումներով, վորոնք բուրժուական դեմո-



կըրբատիան իր ծրագրներում առաջադրում  
է, բայց աշխարհում վոչ մի տեղ չի հասց-  
րել մինչև վերջը, շնորհիվ կապիտալի և  
կրոնական պրոպագանդի միջև փաստորեն  
յեղած բազմապիսի կապերի...

Կուսակցութիւնը ձգտում է լիովին  
քանդել շահագործող գաւաղարգերի և կրո-  
նական պրոպագանդի կազմակերպության  
փոխադարձ կապերը, փաստորեն աջակցի-  
լով աշխատավոր մասսաների ազատա-  
գըրմանը կրոնական նախապաշարունակներից  
և կազմակերպելով ամենալայն զիտական-  
լուսավորական և հակակրոնական պրոպա-  
գանդը:

Այս հանգամանքի վրա պետք է ա-  
ռանձնապես կանգ առնել: Ներկայումս ծա-  
վալի՞լ է արդյոք հակակրոնական աշխա-  
տանքն իրոք այնպես, ինչպես այդ պա-  
հանջում է մեր կուսակցության ծրագիրը,  
և վոչ միայն Մարտնչող անաստվածների  
միության, այլ մյուս կազմակերպութիւն-  
ների կողմից: Կազմակերպւած է արդյոք  
հակակրոնական ամենալայն զիտական—  
լուսավորական պրոպագանդը և ազիտացի-

ան այնպես, ինչպես այդ պահանջում է  
մեր կուսակցության ծրագիրը:

Դժբախտաբար, մենք այդ հարցին  
չենք կարող պատասխանել դրականապես:  
Այդ աշխատանքը զգալիորեն հետ է մնում  
մասսաների պահանջից և այն խնդիրնե-  
րից, վոր դրել են կոմունիստական կու-  
սակցութիւնը և խորհրդային իշխանու-  
թյունը:

Մեր կուսակցութիւնն իր համագու-  
մարներում շատ անգամ է նշել հակակրո-  
նական պրոպագանդ մղելու անհրաժեշտու-  
թյունը:

Կուսակցության 16-րդ համագումարն  
ընկեր ՍՏԱՆԻՆԻ զեկուցման առթիվ բա-  
նաձևի մեջ մատնանշեց, վոր «Կուսակցու-  
թյունը պետք է ամրապնդի և զարգացնի  
այն զգալի հաջողութիւնները, վորոնք  
ձեռք են բերվել մասսաներին կրոնի ու-  
ակցիոն ազդեցութիւնից ազատագրելու  
գործում»:

Բայց, դժբախտաբար, կուսակցության  
16-րդ համագումարի այս վորոշումը չի  
կատարվել: Հակակրոնական պրոպագանդի



հաջողութիւնների ազդեցութեան տակ  
ընկերները զգալի մասը բարեհոգիորեն  
հանգստացավ և վճռեց, Վոր մեզ մոտ կը-  
րոնին արդեն վերջ է տրվել:

Կուսակցութեան նույն այդ 16-րդ հա-  
մագումարում ընկ. Շվեդսկիի ղեկուցման  
վերաբերյալ վորոշումներում մատնանշված  
է. «Պրոֆմիութիւնները պետք է հատուկ  
ուշադրութիւն դարձնեն բանվորների և  
բանվորուհիների նոր կադրերի սօցիալիս-  
տական դաստիարակութեան վրա, սխտե-  
մատիկաբար պայքարեն մանր բուրժուա-  
կան տրամադրութիւնները, նախապաշա-  
րուսները և կապիտալիստական հին կյան-  
քից բանվորական միջավայրում մնացած  
բոլոր մնացուկների դեմ, ձիշտ կազմակեր-  
պեն և ուժեղացնեն հակակրոնական պրո-  
պագանդը, անտիսեմիտիզմի, շովինիզմի,  
ազգային սահմանափակութեան դեմ մղվող  
պայքարը և այլն»:

Պրոֆմիութիւններն իրենց խնդիրը  
հակակրոնական պրոպագանդի վերաբեր-  
մամբ ամենեւին չկատարեցին:

1927 թվականին ամերիկյան բանվո-

րական պատմիրակութիւնը, վոր այցելու-  
թեան եր յեկել իՍՆՄ, դիմեց ընկեր  
ՍՏԱՆԻՆԻՆ հետեւյալ հարցով.

«...Կոմկուսակցութիւնն ապագայում  
կկարողանա, արգոք, չեղոք լինել գի-  
տութիւնն ամբողջութեամբ պաշտպանող  
և կոմունիզմին չդիմադրող կրոնի նկատ-  
մամբ»:

Իհարկէ, պատմիրակութեան անդամ-  
ները, վորոնք դնում էյին այդ հարցը,  
չեյին հասկանում, վոր գիտութիւնը հա-  
կառակ է և թշնամի կրոնին, և վոր կրոնը  
չի կարող իրեն չհակադրել գիտութեան  
ու կոմունիզմին:

Ընկեր ՍՏԱՆԻՆԻՆ այն ժամանակ այդ  
հարցին պատասխանեց.

«Կուսակցութիւնը կրոնի նկատմամբ  
չի կարող չեղոք լինել և նա մղում է հա-  
կակրոնական պրոպագանդ բոլոր ու ամեն  
տեսակի կրոնական նախապաշարուսների  
դեմ, վորովհետեւ նա կողմնակից է գիտու-  
թեան, իսկ կրոնական նախապաշարուս-  
ները գիտութեան դեմ են գնում, քանի  
վոր ամեն մի կրոն գիտութեանն ինչ-վոր



հակադիր բան է... Կուսակցությունը չի  
կարող կրոնական նախապաշարունակների  
վերաբերմամբ չեզոք լինել, և նա պրոպա-  
գանդ կմղի այդ նախապաշարունակների դեմ,  
վորովհետև դա ճիշտ միջոցներից մեկն է  
ջլատելու ռեակցիոն հոգեվորականությունը,  
ազգեցությունը, հոգեվորականությունը,  
վորը պաշտպանում է շահագործող դասա-  
կարգերին և քարոզում է հնազանդվել այդ  
դասակարգերին... Լինում են դեպքեր,  
վոր Կուսակցության անդամներից վոմանք  
յերբեմն խանգարում են հակակրոնական  
պրոպագանդի ըստ ամենայնի ծավալմա-  
նը: Յեթե Կուսակցության նման անդամ-  
ներին հեռացնում են, ապա դա շատ լավ  
է, քանի վոր նման «կոմունիստները»  
տեղ չունեն Կուսակցության շարքերում»:  
(Ի. ՄՏԱԼԻՆ. «Լենինի դմի հարցերը», եջ  
192, 193, 10-րդ հրատարակություն, ռու-  
սերեն):

Ինչ է արված հեղափոխության 20 տա-  
րում Խորհրդային Միության մեջ հակա-  
կրոնական պրոպագանդի և ազիտացիայի  
բնագավառում:

Արված է շատ բան: Մարդկություն պատ-  
մության մեջ մենք առաջին անգամն ենք  
տեսնում այդպիսի հսկայական, մասսայա-  
կան և խորապես աթեիստական շարժում,  
վորն ընդգրկել է միլիոնավոր մարդկանց:  
Պատմությունը մի այլ նման շարժում չը-  
գիտ է: Չի կարելի նվազեցնել մասսաների  
գիտակցություն մեջ առաջ բերած այդ հե-  
ղաշրջման նշանակությունը, հեղաշրջում,  
վորը վկայում է ամենից առաջ այն փո-  
փոխությունների խորություն մասին, վոր  
տեղի յեն ունեցել մեք Խորհրդային յերկ-  
րում, յերկրագնդի մեկ վեցերորդ մա-  
սում:

Հազարամյակներով կրոնական պատ-  
կերացումները ճնշել են մարդկանց գի-  
տակցությունը, բայց բավական եր պրո-  
լետարական հեղափոխության և սոցիալիս-  
տական շինարարության 20 տարին՝ կո-  
մունիստական Կուսակցության դեկավա-  
րությամբ, վորպեսզի միլիոնավորներն  
ազատագրվեն կրոնի ազդեցությունից:

Այդ միլիոնավորների, գլխավորապես  
բանվորների ու գյուղացիների շարքում



Հան շատ հետևիողական աթեիստներ, մար  
դիկ, վորոնք վոչ միայն խղել են իրենց  
կապը յեկեղեցու և կրոնական կաղմակեր-  
պությունների հետ, այլ և մշակել են ի-  
րենց մեջ աթեիստական աշխարհայաց-  
քը:

Սակայն չի կարելի նաև չափազանցել  
աթեիզմի այդ հաջողությունների նշանա-  
կությունը: Հաջողությունների չափազան-  
ցումը շատ ավելի վտանգավոր է, քան  
նրանց թերադնահատումը: Շատ վտանգա-  
վոր կլինեն մոռանալ, վոր կրոնական մը-  
նացուկները դեռևս բավականաչափ ուժեղ  
են ԽՍՀՄ աշխատավոր ազգաբնակչության  
զգալի մասսանների մեջ: Յեթե դա չլիներ,  
ապա ԽՍՀ Միության մեջ գոյություն չե-  
լին ունենա կրոնական մոտ 30 հազար ըն-  
կերություն: Այդ բոլոր կրոնական ընկե-  
րությունները և կաղմակերպությունները  
հենակետ են հանդիսանում մեր կողմից  
ջախջախված դասակարգային թշնամիների  
համար: Յեկեղեցականներն ազդեցություն  
ունեն վոչ միայն ջախջախված, լուծարքի  
յենթարկված պարագիտային դասակարգե-

րի բեկորների մեջ, և վոչ միայն մենատըն  
տեսների մեջ գոյություն, այլև աշխատավոր  
ների շրջանում, բանվորների և կոլտնտե-  
սական գյուղացիների մի մասի մեջ:

Չպետք է մոռանալ, վոր միլիոնավոր  
գյուղացիներ և բանվորների մի մասը  
դեռևս կատարում են այնպիսի վայրենի  
կրոնական ծիսակատարություններ, ինչ-  
պիսին նրանք յեղել են 1000 տարի առաջ:

Մենք չենք կարող մոռանալ, վոր դեռ  
ներկա ժամանակներում էլ շատ աշխատա-  
վորներ անձրեվի, հիվանդներին բժշկելու  
և այլնի համար աղոթքով գիմում են գո-  
յություն չունեցող աստվածներին:

Մենք չենք կարող մոռանալ այն, վոր  
խավարամիտ, կրոնական գաղափարախոհ  
սությունը դեռ այսօր էլ ազդեցություն  
ունի ընտանեական կենցաղի վրա, պաշտ-  
պանում է դեպի կինը վորպես ստրուկի  
վերաբերմունք ցույց տալը: Մենք չենք  
կարող մոռանալ այն, վոր դեռ այսօր էլ  
կրոնապաշտ ընտանիքներում յերեխանե-  
րը դաստիարակվում են սոցիալիզմին և  
գիտական աշխարհայեցողությանը թշնա-  
մի կրոնական վոգով:



Ահա թե ինչու վոչ մի բողոք չի կարելի թուլացնել մեր հակադրոնական պրոպագանդան ու ագիտացիան:

Այդ աշխատանքն առանձնապես կարևոր նշանակություն ունի ներկայումս:

Մինչդեռ ստիպված ենք նշել, Վոր առկա յե հակադրոնական պրոպագանդի թուլացման, իսկ վորոշ տեղերում նաև լիակատար զադարեցման փաստը: Շատ տեղերում կազմալուծվել են Մարտնչոդ անաստվածների միություն կազմակերպությունները (ՄԱՄ), լուծարքի յե յենթարկված հակադրոնական պրոպագանդը դպրոցում, պրոֆմիություններում, կոմյերիտական կազմակերպություններում:

Ինչո՞ւ դա տեղի ունեցավ:

Իբրա գլխավոր պատճառն է հակադրոնական պրոպագանդի հաջողությունների չափազանցումը, յուր տեսակի «գլխապտույտը հաջողություններից», հաջողությունների չափից ավելի մեծացումը:

Յերկրորդ պատճառն է՝ ուղորտունիտական բարեհոգությունը, վորը կայանում է նրանում, վոր մարդիկ հավատացնում

եյին և հավատացնում են ուրիշներին և իրենց, վոր «հավատացողներ բոլորովին քիչ են մնացել»:

Իսկ ճիշտ չե, խորհրդային պետություն մեջ հավատացողներ դեռ շատ կան, առանձնապես գյուղում, և հատկապես այնտեղ, ուր հակադրոնական պրոպագանդը մոռացություն է մատնված:

Յերրորդ պատճառն ուղորտունիտական այն պատկերացումն է, թե կրոնապաշտ «մնացել են միայն ծերունիները»:

Իսկ նույնպես ճիշտ չե, դիտողությունները և փաստերը ցույց են տալիս, վոր հավատացյալների մեջ դեռևս շատ են և՛ յերեխաներ, և՛ կոմյերիտական հասակի յերիտասարդություն: Բայց չե՞ վոր այդ յերիտասարդությունը սովորել է մեր դրություններում և հեռացել է դպրոցներից, առանց աղատադրվելու կրոնի մթագնումից:

Չորրորդ պատճառն այն է, վոր կուլտուրական և քաղաքական ֆրոնտի աշխատողների մի մասի մեջ գոյություն ունի ուղորտունիտական համոզվածություն, թե «կրոնը կմեռնի ինքն իրեն», թե բա-

կ  
դ



վական ե միայն այս կամ այն հաջողութ-  
ւոյունները ձեռք բերել տնտեսական շի-  
նարարութեան ընագավառում ե կուլտու-  
րայի ընագավառում, վորպեսզի կրօնը մեռ-  
նի ինքն իրեն: Այդ քաղաքը քառակար ե:  
Դա զբոլում ե պատմիւորեն զխաւ այն աշ-  
խատանքը, վոր կատարում են կրօնական  
կազմակերպութեանները:

Յեւ, վերջապես, հակակրօնական աշ-  
խատանքի այդ թուլանալու գործում յե-  
րեւում ե ճաշակի ընդհանուր կորուստ  
մասսայական քաղաքակարական աշխա-  
տանքի նկատմամբ, վորի մասին ընկեր  
ՍՏԱՆԻՆԸ խոսեց մեր կուսակցութեան  
կենտրոնական կոմիտեյի փետրվարյան—  
մարտյան պլենումում տված իր զեկուցման  
մէջ:

Հակակրօնական աշխատանքի թուլա-  
ցումն անթույլատրելի յե մանավանդ այն  
պատճառով, վոր մենք այժմ նկատում ենք  
կրօնական կազմակերպութեաններէ գործու-  
նելոյթան աշխուժացում: Թշնամին չի կա-  
րող չողտադործել կրօնական կազմակեր-  
պութեանների փոխած ցանցը մեր յերկ-

րում: Բազմաթիւ փաստեր խոսում են այն  
մասին, վոր այժմ արդեն կրօնական կազ-  
մակերպութեաններն սկսել են ուժեղ կեր-  
պով պատրաստուել աշխատավորների խոր-  
հուրդների ընտրութեաններին:

Իերեւմ մեր մամուլում հրապարակված  
մի քանի փաստեր:

«Խարկովսկի րարոչի»-ն հունիսի 1-ին  
հաղորդում ե, վոր տերտերները նախընտ-  
րական գասարդիային ուղեւորութեաններ  
են կատարում դեպի Խարկովի մարզի շըր-  
ջանները: Պրտավայից Կրեմենչուգ են յե-  
կել տերտերները, հրահանգներ տալու տե-  
ղական հոգեւորականութեանը, թե ինչպես  
աշխատել առաջիկա ընտրութեանների կա-  
պակցութեամբ: Յեկեղեցականներից մեկը  
ժողովում բավական վոչ յերկրմաստ կերպով  
արտահայտեց իր փայփայած միտքը՝ տեր-  
տերների կողմից առաջ քաշել մի թեկնա-  
ծութեան Գերագույն Խորհրդի համար:

«Ռարոչի կրայ» թերթը (Իվանովոյի  
մարզ) նոյեմբերի 4-ին հաղորդում եր, վոր  
Իլինսկի շըջանի կուտնտեսութեաններում  
յերեւակել ե մի հեղ ծերուկ, վորը շըջում



եր կոլանտեսությունները և «գուշակում ապագան»: Տերտերները հանդեսով եյին գիմալորում այդ «ուխտավորին» և լուրեր եյին տարածում, թե նա բժշկում և հիվանդություններից: Այդ «ծերուկը» ղուրս յեկավ նախկին խոշոր առևտրական Նովո-ժիլովը, վորը կատարելով կրոնականների դիրեկտիվները, շրջում եր գյուղերը, վոր-պեսզի յերեման հանի այն մարդկանց, վորոնց վրա տերտերները կարողանան հենվել խորհուրդների ընտրությունների ժամանակ:

Հարավային Ղազախստանի Սարամի շրջանում աղագյանականները մոլլաների հետ միասին ակտիվ կերպով նախադա-րաստվում են խորհուրդների ընտրություն-ներին և արդեն կաղմել են այն մարդկանց ցուցակները, վորոնք, նրանց կարծիքով, պետք և լինեն շրջգործկոմի նախագահ և գյուղխորհուրդների նախագահներ:

Մի շարք տեղերում տերտերներն արդեն անց են կացնում ընտրությունների «ռեպետիցիան», ուժերի փորձը: Այսպես, որի-նակ, 1937 թվականի մարտի վերջերին

Յարոսլավլի մարզի Սուգայկովի շրջանի Տուրգենեվյան գյուղխորհրդում յեկեղեցու շենքում յեկեղեցականները կատարեցին գյուղական խորհրդի ընտրությունների փորձը:

Ահա այն փաստերը, վորոնք ցույց են տալիս, թե վորքան ակտիվացել են կրո-նական կաղմակերպություններն առաջիկա ընտրությունների կապակցությամբ: Մի-անգամայն պարզ և, վոր կրոնական կաղ-մակերպությունների հովանու տակ գոր-ծում և խորհրդային իշխանության թշնա-մին:

Առանձնապես պետք և նշել, վոր Թըշ-նամին տեղ-տեղ կարողացել և խցկվել խոր-հուրդները և ոգնում և կրոնական կաղմա-կերպություններին:

Այսպես, որինակ, Սվերդլովի մարզի Սուխոլոժսկի շրջգործկոմը գրավոր կերպով տեղեկացրեց Սվերդլովի թեմի միտրոպո-լիտին, վոր նա չանհանգստանա տերտերի ազատ տեղի նկատմամբ: Շրջգործկոմն ար-դեն «նշանակել և» մի տերտեր «հովվական պարտականությունները կատարելու» հա-



մար: Այստեղ շրջգործկոմը հանդես ե գալիս տերտերական կադրեր բաշխողի իր համար միանգամայն անվայել դերում:

Մոտավորապես նույնպիսի փաստ են հաղորդում Բելո-կալիտվենսկի շրջանից (Ադով-Սեվոկյան յերկրամաս): Բելո-կալիտվենսկի շրջգործկոմի նախագահ Կրիվոպոլստենկոյն «բարություն արեց» տերտեր Գուլյակովի վերաբերմամբ, պաշտոնապես հաստատելով նրան Բելո-կալիտվենսկայայի յերեց և հանելով յերեցությունից տերտեր Յանչենկոյին, վորը մրցում եր տերտեր Գուլյակովի հետ: Տերտեր Գուլյակովի իսկույն յերախտահատույց յեղավ շրջգործկոմի նախագահին և հավաքելով իր «ակտիվիստներին», առաջարկեց հարգել շրջգործկոմի նախագահ Կրիվոպոլստենկոյին, նվիրելով նրան յեկեղեցուց մի գորգ: Առաջարկութուն ընդունվեց, գորգը շրջգործկոմի նախագահին մատուցեցին այսպիսի վերտառությամբ՝ «Տոկուն բոլշևիկ ընկ. Կրիվոպոլստենկոյին՝ յեկեղեցական խորհրդից ի նշան այն հաղթանակների ու նվաճումների, վոր ձեռք ե բերել շրջգործ-

կոմը նրա իմաստուն առաջնորդությամբ՝ մասսաների կուլտուրական լուսավորության ֆրոնտում»:

Ի հարկե, այդ որինակ խայտառակ փաստերը յեղակի յեն, բայց նրանք վկայում են այն մասին, վոր կան այնպիսի խորհուրդներ, ուր սողոսկել են թշնամիները, վորոնք ոժանդակում են կրոնական կազմակերպություններին և պատրաստ են ոգնել նրանց՝ ընտրությունների ժամանակ:

Տեղ-տեղ մեր խորհուրդների մեջ սողոսկել են ահտիվ յեկեղեցականներ:

Մենք չենք ուզում ասել, վոր հավատացյալները չեն կարող ընտրվել խորհուրդների մեջ: Սահմանադրության լրիվ համապատասխան նրանք կարող են ընտրել և կարող են ընտրվել:

Սակայն խորհուրդների մեջ պետք ե արդյոք ընտրել ահտիվ յեկեղեցականներին: Վո՛չ պեթ և պայքաբել, վոր խորհուրդների մեջ չընտրվի պաշտամունքի և վոյ մի սպասաբհու, կրոնական կազմակերպությունների և վոյ մի աղջիվ գործիչ:

Խորհուրդների ընտրությունների նա-



խապատրաստման կապակցությամբ՝ տեր-  
տերները յուրայնորեն զբաղվեցին Սահ-  
մանադրության «պարզաբանումով»։ Նրանք  
բացատրում են այն այնպես, ինչպես ի-  
րենց ձեռնտու յե։ Մեր տեղական մի քա-  
նի խորհուրդների ապուշ անհույսության  
պատճառով տեղի յես ունենում այսպիսի  
փաստեր։

Բուլերեհնակի շրջանի (Ոմսկի մարզի)  
Ստարիյ Կարասուկ գյուղում տերտերը  
հայտարարեց ամբողջ բնակչությանը, վոր  
նա յեկեղեցում անց ե կացնում Սահմա-  
նադրության քննարկումը։ Այդպիսով՝  
Սահմանադրության բացատրության նա-  
խաձեռնությունը յեխնում ե վոչ թե տե-  
ղական խորհրդից, այլ՝ տերտերից։

Սորոկենովո գյուղում տերտերը կանո-  
նավոր կերպով հավաքում ե յեկեղեցական  
խորհուրդը և կարգում Սահմանադրու-  
թյունը, յուրայնորեն մեկնաբանելով այն։

Ե՛լ ավելի դարմանալի փաստ են հա-  
յորդում Իվանովոյի մարզից. ապրիլի  
26-ին Ֆեոդորովսկի գյուղխորհրդում (կիր-  
ժաշսկի շրջանի) գյուղխորհրդի հերթա-

պահը տերտեր Ուրովն եր, վորն այցելու-  
ների հետ անց եր կացնում կրօնական  
դրույցներ։

Սյդ որինակ փաստերը ստիպում են  
մեզ արթուն լինել և հոգ տանել, վոր խոր  
հրդային կազմակերպությունները վոչ մի  
չափով չկարողանան ոգտագործվել խոր-  
հուրդների մնջ տերտերների և կրօնական  
կազմակերպությունների գործիչների սո-  
զուկելու համար։

Մենք կրօնականների կողմից ունենք  
ուղղակի փորձեր վոչ միայն ընդարձակո-  
րեն մեկնաբանելու, այլ և հակահեղափո-  
խականորեն աղավաղելու խորհրդային  
Սահմանադրությունը։ Սահմանադրությունը  
աղավաղելու, այն ընդարձակորեն մեկնա-  
բանելու փորձերի դեմ, խորհրդային որ-  
դանները կրօնական կազմակերպություն-  
ների ուժեղացման համար ոգտագործելու  
փորձերի դեմ մենք պետք ե ամենավճռա-  
կան պայքար մղենք։

Մեր կարևորագույն խնդիրներից մեկն  
ե՝ կոմունիստական, հետեվապես նաև ա-  
թիստական վոգով զստիարակել մեր



յերիտասարդ սերունդը: Մենք ունենք փաստեր, վարոնք վկայում են կրոնական կազմակերպությունների ուժեղ փորձերի մասին՝ ազդելու յերիտասարդության վրա: Կրոնական և աղանդավորական կազմակերպությունների մեջ յերիտասարդությանը ներգրավելու մեթոդները շատ բազմաոճակ են: Այսպես, որինակ՝ «Վոստոչնո-Սիբիրսկայա պրավդա» թերթի ապրիլի 24-ի հաղորդագրությամբ՝ Չերեմխովսկի շրջանի Վելսկոյե գյուղում յեկեղեցական համայնքը կազմակերպել և յերիտասարդության ժամանցը—ձեռք են բերել սեղանի բլիտարդ, շախմատ, շաշկի:

Յեկեղեցական կազմակերպությունների մեջ յերիտասարդներին ներգրավելու կանախներից մեկը—դա յեկեղեցական յերգեցիկ խմբերն են, ուր տերտերներն աշխատում են հալածազրել յերիտասարդությանը:

Տեղատեղ տերտերները կազմակերպում են դպրոցական հասակի յերեխաների մասնաշաղկան կնուներ:

Աղանդավորական քարոզիչները և տեր-

տերներն ամեն ինչ ոգտագործում են իրենց նպատակների համար, այդ թվում և տարերային աղետները, և՛ յերաշտը, և՛ արեվի խավարումը: Նրանք հույսով են լինում, վոր դժվար դրության մեջ գտնվող մարդուն ավելի հեշտ ե խաբել: Յեվ նրանք վոչնչից չեն խորշում: 1936 թվականի գարնանը Վրաստանի մի քանի շրջաններում տեղի ունեցան յերեխաների կարմրուկով և ծաղիկով հիվանդանալու դեպքեր: Ոգտվելով այդ բանից, տերտերներն ուժեղ ագիտացիա տարան, թե «բոլոր ուժեղ ագիտացիա տարան, թե «բոլոր չմկրտված յերեխաները կմեռնեն»: Նրանք իրենց այս հակահեղափոխական ագիտացիան ուժեղացրին այն ժամանակ սպասվող արեվի խավարման կապակցությամբ: Վորպես արդյունք նրանց ագիտացիայի մի շարք տեղերում տեղի ունեցավ յերեխաների և նույնիսկ անչափահասների մասնաշաղկան կնուներ: Իրենց յերեխաներին մկրտում եյին նաև առանձին «կոմյերիտներ» և «կոմունիստներ»:

Վերջին ժամանակի մի շարք փաստեր վկայում են յեկեղեցականների և աղան-



գավորական պարագլուխների ուղղակի հակահեղափոխական գործունեություն մասին, լրտեսությունը ցույց տված նրանց մասնակցություն մասին: Փաստեր կան, յերբ կրոնական կազմակերպությունները միահյուսվում են տրոցկիստական և բուխարինյան լրտեսների հետ, եսերների և ժողովրդի մյուս թշնամիների հետ և նրանց հետ մեկտեղ հակահեղափոխական աշխատանք տանում:

Նորերս Ուլույում բացվեց ֆաշիստ յեկեղեցականների հակահեղափոխական հըրոսակախումքը: Այդ մասին հաղորդում է «Ուլուվսկայա պրավդա» թերթը 1937 թվականի մայիսի 30-ի համարում: Այդ հըրոսակախումքը միավորում եր վոչ միայն քահանաներին, այնտեղ կային նաև մեկ նախկին իշխան, ութ նախկին խոշոր տընատեր և յերեք նախկին կալվածատեր: Այդ հակահեղափոխական հրոսակախմբից 7 հոգի ցարեզմի ժամանակ յեղել են սեվհարյուրակային «Միխայիլ Աբխանզելե» միություն ակտիվ անդամներ: Տասնվեց հոգի դանազան ժամանակներ դատվել են

հակահեղափոխական գործունեություն համար: Բոլոր այդ մարդիկ յեկեղեցու հովանու տակ հակահեղափոխական աշխատանք են տարել:

Վերջին ժամանակներս մամուլում հըրապարակվել են յեկեղեցականների՝ լրտեսությունը ցույց տված մտնոկցուրյոմ միշարք փաստեր: Այսպես որինակ, «Խարկովսկի ռաբոչի»-ն հունիսի 11-ի համարում հաղորդում է, վոր Պիրյատինի շրջանի (Խարկովի մարզի) տեղական յեկեղեցականները հատկապես մի կույս եյին ուղարկել Կիեվ՝ ոտարերկրյա հետախուզություն գործակալի մոտ, հրահանգներ ստանալու: Կրեմենչուգի յեկեղեցական համայնքի ղեկավարներից մեկը դուրս յեկավ գերմանական լրտես:

Մամուլը նման որինակ փաստերի մասին հաղորդում է ուրիշ շատ տեղերից: Նույն այդ ուղղությունամբ մեծ ակտիվություն են ցուցաբերում ադանդավորական կազմակերպությունների զանազան տեսակի ղեկավարներ:

Ահա թե ինչու ավելի քան որինական



ե արթուն աշալըջությունը յեկեղեցական-  
ներէի և կրօնական կազմակերպություննե-  
րի վերաբերմամբ, այլև նրանց գործունե-  
յության նկատմամբ ամենաուշադիր հսկո-  
ղությունը, այդ գործունեյության ռաւում-  
նասիրումը, մասսաների վրա նրա ունե-  
ցած ազդեցության հակադերիւր և այդ ազ-  
դեցության դեմ պայքարելը:

Իսկ կոմունիստներն ինչպես պետք է  
պատասխանեն կրօնական կազմակերպու-  
թյունների գործունեյության այդ աշխու-  
ժացմանը, և ինչպիսին պետք է լինի մեր  
հակակրօնական պրոպագանդի և ագիտա-  
ցիայի բովանդակությունը:

Ամենից առաջ անհրաժեշտ է մասնա-  
նշել, Վոր հակակրօնական և մյուս կազ-  
մակերպությունները, Վորոնք պարտավոր  
են հակակրօնական պայքար մղել, աննե-  
րելի դանդաղ և թույլ են ծավալում այդ  
աշխատանքը: Վերջինս պետք է ծավալել  
ազնիւ ուժգին՝ և՛ լայնքով և՛ խորու-  
յամբ:

Հակակրօնական ագիտացիան բավա-  
կանաչափ չի ծավալվել մամուլում, թե-

պետ վերջին ժամանակներս ընդհանուր  
և շրջանային մամուլն ուժեղացրեց իր ու-  
շադրությունը հակակրօնական պայքարի  
հարցերի նկատմամբ:

Սոսեւով հակակրօնական ագիտացիայի  
և պրոպագանդի թերությունների ու թու-  
լության մասին, մենք ամենից առաջ նը-  
կատի ունենք Մարտնչոյ անասովածների  
միության կազմակերպությունը, Վորը  
միության աշխատում, իսկ տեղ-տեղ՝ ինքնա-  
լուծաբքի յե յենթարկվել: Անհրաժեշտ է  
վերաստեղծել և ամրապնդել ՄԱՄ-ի կազ-  
մակերպությունները: Սակայն միաժամա-  
նակ պետք է հրաժարվել այն ֆլասակար  
հայացքից, թե հակակրօնական պրոպա-  
գանդով պետք է զբաղվի միայն  
ՄԱՄ-ը: Դա բոլոր կոմունիստների, բոլոր  
կոմյերիտների, պրոֆմիութենական բոլոր  
կազմակերպությունների գործն է, բոլոր  
նրանց, ով կուլտ-մասսայական աշխատանք  
է տանում: Դա զպրոցի, կինոյի, թատրո-  
նի, մեր ամբողջ մամուլի, հակակրօնա-  
կան և յերկրագիտական թանգարանների  
գործն է, ուղիւ-հաղորդման գործը: Դա



մեր յուրաքանչյուր ազիտատորի՝ կու-  
սակցական և վոչ-կուսակցական բողջեիկի  
գործն և:

Միանգամայն անբավականաչափ են  
ծախալել հակաիրոնական աշխատանքը  
պրոֆմիսությունները և կուս-ժողովմատի  
որդանները:

Ընտրություններին նախապատրաստ-  
ման կապակցությամբ պետք է նախա-  
դիւշացնել 2 տարբեր բաներ շփոթելուց:

Առաջինը՝ մեր վերաբերմունքը դեպի  
կրոնը և կրոնական կազմակերպություն-  
ները:

Յերկրորդ՝ մեր վերաբերմունքը դեպի  
հավատացյալները:

Այս յերկու բանը չի կարելի շփոթել:  
Կրօնի և կրօնական կազմակերպութեան  
դեմ մենք պայքարում ենք և պայքարելու  
յենք: Իսկ հավատացող մասսային մենք լու-  
սավորում ենք և համոզում: Մենք չենք  
պայքարում հավատացյալների դեմ, այլ պայ-  
քարում ենք կրօնի դեմ: Այստեղից է նա-  
յեղ մեր հակաիրոնական գործունեյու-  
թյան բնույթը և մեր աշխատանքի բո-  
վանդակությունը:

Առաջվա պես, և մանավանդ ներկա  
մոմենտում մենք խորացված հակաիրո-  
նական պրոպագանդ ենք մղում կուսակ-  
ցության ցուցումների, Լենինի և ՍՏԱ-  
Լինի ցուցումների հիման վրա:

Մենք բացատրում ենք գիտության և  
կրոնի անհամատեղիւթյունը: Դրա հա-  
մար մենք պետք է լայն չափերով կազ-  
մակերպենք գիտա-լուսավորական բը-  
նույթի դասախոսություններ և զեկու-  
ցումներ:

Կոլտնտեսական և մենատնտես գյու-  
ղացիների լայն մասսաներին մենք պետք  
է բացատրենք բնության այն յերեվութ-  
ները, զոր դեռ շատերը մինչև այժմ բա-  
ցատրում են գերբնական ուժերի՝ ապօրո,  
սատանայի, սրբերի, չարքերի միջամտու-  
թյամբ և այլն: Մասսաները հետաքրքը-  
վում են այնպիսի հարցերով, ինչպիսիք  
են կյանքի ծագումը յերկրի վրա, աշ-  
խարհի կազմությունը: Գիտության նվա-  
ճումները հերքում են կրոնական բոլոր  
պատկերացումները բնության և հասարա-  
կության մասին: Յեղ գիտության այդ



նվաճումները մենք պետք է մասսա-  
յականացնենք կրոնական, վոչ-գիտական  
հայացքների դեմ պայքարելու համար։  
Որինակ՝ վերցնենք աշխարհի ստեղծման  
հարցը, կենդանիների, բույսերի ծագման  
հարցը։ Աստվածաշնչում այս բոլորը ներ-  
կայացված է միամիտ կերպով, յերեխա-  
յորեն։ Աստվածաշնչում արտացոլված են  
այն վայրենիների պատկերացումները,  
վորոնք կազմվել են բազմաթիվ հազարա-  
վոր տարիներ առաջ։ Մենք աստվածա-  
շնչի կրոնական հեքիաթներին պետք է  
հակադրենք Դարվինի ուսմունքի, Բեր-  
բանկի և մեր գիտնական սելեկցիոնե-  
րներ Միչուրինի, Յիցինի, Լիսենկոյի աշ-  
խատությունների լայն պրոպագանդը։ Այս  
նյութի վրա պետք է ցույց տալ աշխարհի  
վերաբերյալ կրոնական պատկերացումնե-  
րի անհեթեթությունը։

Պետք է ցույց տալ, թե ինչ միամիտ  
հեքիաթ է հանդիսանում աստվածաշնչի  
այն պատմությունը, թե իբր աստված մե-  
ծամանակ ստեղծել է անասունների ու  
բույսերի բոլոր տեսակները, և իբրեւ թե

նրանք այն որից մնում են անփոփոխ։  
Այս հեքիաթի միամտությունը և անհեթե-  
թությունն առանձնապես պարզ կլինեն,  
յեթե պատմենք այն մասին, թե ինչպես  
Միչուրինը, Բերբանկը, Լիսենկոն, Յիցինը  
և մյուսները ստեղծեցին և ստեղծում են  
բույսերի նոր տեսակներ։ Դյուղացիներն  
այդ գիտեն և հեշտությամբ կհասկանան։  
Պետք է միայն այդ, - ինչպես հարկն է,  
բացատրել նրանց։

Նույնիսկ այնպիսի փաստեր ինչպիսին  
են խորհրդային սովառնորդների հիանալի  
թուիչները դեպի Հյուսիսային բեվեռ,  
Հյուսիսային բեվեռի վրայով դեպի Ամե-  
րիկա կատարած թռիչքները, վորոնք նա-  
խապես ճշտությամբ հաշվված եյին խոր-  
հրդային սովառնորդների, խորհրդային  
ինժեներների կողմից (ըստ վորում նրանք  
բոլորն էլ անաստվածներ են), բավակա-  
նաչափ ցայտուն կերպով ցույց են տալիս,  
թե վորքան մեծ են գիտության հաջողու-  
թյունները մեր յերկրում և թե վորքան  
խղճուկ են յերևում դրա համեմատությամբ  
աշխարհի վերաբերյալ կրոնական հեքիաթ-



ները: Պետք է այդ-լայն չափերով պրոպագանդ անել: Այդ ամենը հիանալի նյութ է կրոնական նախապաշարունակները ջրելու համար:

Առաջվա պես մենք պետք է բացատրական մեծ աշխատանք տանենք կոմունիզմի նկատմամբ կրոնի թշնամական դիրքի, կրոնական կազմակերպութիւններէ դասակարգային դերի, նրանց՝ վորպես սոցիալիստական շինարարութեան արգելակող դերի վերաբերյալ: Այդ բանն ապացուցող փաստերը շատ են. բավական է ուշադրութեամբ դիտել տեղական կյանքը՝ տեսնելու համար բոլոր և ամեն տեսակ կրոնական կազմակերպութիւնների այդ փնասակար գործունեութիւնը:

Մենք պետք է մեծ աշխատանք տանենք՝ մերկացնելու համար կրոնական կազմակերպութիւնների հակահեղափոխական ծառայութիւնը կապիտալիստական շրջապատին: Պետք է նրանց մերկացնել և աշխատավորներին ծանոթացնել նրանց դիվերսիոն, լրտեսական, փնասարարկան գործունեութեան փաստերին: Դեռ ավել-

լին, պետք է ցույց տալ յեկեղեցականների անցյալ հակահեղափոխական վողջ գործունեութիւնը, յեկեղեցականների, վորոնք ոժանդակում էին սպիտակ գվարդիականներին և ինտերվենտներին, բոլոր յերկրներում ոժանդակում էին և այժմ ուժանդակում են սոցիալիզմին թշնամի կապիտալիստական իրավակարգին:

Մենք ցույց ենք տալիս կրոնի անգործութիւնը դիտութեան տեսակետից, նրահեքիաթների անիմաստութիւնը և կրոնական նախապաշարունակների փնասը: Մենք ցույց ենք տալիս, թէ ինչպիսի նպատակների յե ծառայում կրոնը, վեր ենք հանում կրոնական կազմակերպութիւնների կապը աշխատավորների թշնամի ուժերի հետ:

Հարեցտանում Իտալիայի մղած պատերազմի որնիկավ, Իսպանիայում Փաշիստական Գերմանիայի և Իտալիայի կատարած ինտերվենցիայի որինակով յուրաքանչյուր հավատացյալ մեր պրոպագանդից պետք է իմանա յեկեղեցու խայտառակ դերի, Փաշիզմին և իմպերիալիզմին



նրա մատուցած ծառայութեան մասին, այն մասին թե՛նա ինչպէս եողնում Իտալիայի, Գերմանիայի և Փաշխտական մյուս պետութիւններին ամենազարեի վոճրադործութիւններին աշխատավորներին դեմ:

Պետք է պատմել, թե ինչպէս կաթոլիկ յեկեղեցու գլուխը, Հռոմի պապը, վորը դեռ վոչ շատ առաջ «խաչակրաց արշավանք» եր կազմակերպում Խորհրդային Միութեան դեմ, որհնում է կանանց, յերեխաների և ծերերի մասսայական բնաջընջումը Փաշխտ բանդիտների կողմից, աշխատավորների մասսայական սպանութիւնները, պարգևատրելով և որհնելով աշխատավոր մարդկութեան դեմ կատարվող այդ ամենանոզկալի վոճրադործութիւններին մասնակիցներին:

Մենք մեր հակակրոնական պրոպագանդում աշխատավորների առաջ պետք է վեր հանենք բոլոր կրօնների յեկեղեցականների և ազանդավորական պարագլուխների քառակար գործունեյութիւնը:

Շատ լայն և տարբեր նյութի հիման վրա մենք պետք է ցույց տանք կրոնի և

կրոնական կազմակերպութիւնների վնասը: Կրոնի դեմ մենք պայքարում ենք համոզելու և միայն համոզելու միջոցով:

Խորհրդային Սահմանադրութիւնն անհամեմատ ավելի, քան աշխարհում մի վորեւ այլ յերկրի սահմանադրութիւնն, ապահովում է կողմի ազատութիւն, յուրաքանչիւր մարդու իրավունք և վերապահվում հավատալու իր ցանկացած աստուծոյ կամ չհավատալու վոչ մի բանի: Այդ մենք պետք է բնագծենք ամբողջ ուժով և անկեղծութեամբ, թույլ չտալով վոչ մի խտրում և վերապահութեամբ հավատացյալներին վերաբերմամբ, վորոնք զերակշռող մեծամասնութեամբ խորհրդային իշխանութեանը նվիրված մարդիկ են:

Մենք՝ անաստվածներս՝ Ստալինյան Սահմանադրութեանը լիովին համապատասխան կարծում ենք, վոր խորհրդային ազնիվ քաղաքացիները կարող են և պետք է ընտրվեն աշխատավորների խորհուրդներում անկախ այն բանից՝ հավատում են նրանք աստուծոյ, թե վոչ: Սակայն մենք պե՛տ է պայտարենք, վոր խորհուրդների մեջ չնսրվեն նրանք, ովքեր իրենց համար արհեստ են դարձրել գոյութիւն չունեցող աստվածների, սրբերի, հրեշտակների, սասանայի, դժխտի ու դրախտի վերաբերյալ հեփաթեթով ժողո-



վրդիմ քմեցնելու գործը: Մենք դեմ ենք, վոր աշխատավորների խորհուրդների մեջ սողոսկին ահալով կրոնավորները, և հիշեցնում ենք ընկեր ՍՍՍՀԻՆԻ խոսքերը՝ Նորհուրդների Համամիութենական Արտակարգ 8-րդ Համագումարում տված նրա զեկուցումից:

«... Յեթե ժողովուրդը վորևե տեղ ընտրի թշնամի մարդկանց, ապա այդ կընըշանակի, վոր մեր ազիտացիոն աշխատանքը շատ վատ է զրված, և մենք լիորեն արժանի յենք այդ խայտառակության, իսկ յեթե մեր ազիտացիոն աշխատանքը բոլշեվիկորեն տարվի, ապա ժողովուրդը թշնամի մարդկանց ներս չի թողնի իր գերագույն որգանները: Կնշանակի պետք է աշխատել, և վոչ թե նվալ, պետք է աշխատել և վոչ թե սպասել, վոր ամեն ինչ տրվի պատրաստի, վարչական կարգով»:

Մեր պրոպագանդը և ագիտացիան կրոնի դեմ չպե՛սք յի՛նք վե՛րացալե՛ս պրոպագանդ և ագիտացիա:

Պետք է կազմակերպել դասախոսություններ, զեկուցումներ, զրույցներ հավատացյալների հետ. այդ զրույցներին մասնակցելու համար ներգրավելով շարքային անաստված բանվորներին, կոլտրնտեսականներին, ինտելիգենտներին:

Մենք հատուկ ուշադրություն ենք հրավիրում Մաքսեչոդ անաստվածների քննությունը կազմակերպությունների ռաբայիմ անդամների ակտիվացման, նրանց աքիզմի պրոպագանդայի մեջ ներգրավելու անհրաժեշտությունը վրա: Պետք է անաստվածների կազմակերպություն մեջ ներգրավել այն մանդկանց, վորոնք խղել են իրենց կապը կրոնից և հեռացել կրոնական կազմակերպություններից: Պետք է զբաղվել նրանց հետ, բարձրացնել նրանց գիտակցություն մակարրակը: Մյուս կարելիք խնդիրը կայանում է նրանում, վոր բաժնեացիի ագիտացումների և պրոպագանդիստների մակարդակը: Անհրաժեշտ է յուրաքանչյուր շրջանում կազմակերպել հակակրոնական պրոպագանդիստների և ագիտատորների վորակավորումը բարձրացնելու և վերապատրաստելու դասընթացներ: Որինակ, Մոսկվայում հակակրոնական տասնորյա դասընթացները 13 շրջաններում տվեցին հակակրոնական ակտիվ 800 մարդ: Անհրաժեշտ է հակակրոնական աշխատանքի համար ներգրավել ուսուցիչներին, ագրոնոմներին, բժիշկներին, ինժեներատեխնիկական աշխատողներին:

Պե՛սք է վերանայել և բաժնեացի յեղած գրադարանները: Ներկայումս հակա-



կրօնական գրականությոնը լույս է տես-  
նում շատ ավելի մեծ չափերով, քան այդ  
յեղել է մինչև վերջին ժամանակներս: Նա  
պետք է լինի գրադարաններում:

Ներկա մոմենտի համար գլխավորն է՝  
յուրաքանչյուր ավյալ վայրում կուտնտե-  
սության մեջ, գյուղում, ձեռնարկության,  
հիմնարկության մեջ, դպրոցում միավորել  
ակօթի անասնաբույժներին: Մարտնչող անաս-  
նաբույժների բնկերության կազմակերպություն-  
ները շրջել դեպի հավասարակշռության հետ տա-  
վող մասնատված անասնաբույժների կողմը: Բայց  
չդնել այն բանի վրա, թե ժամանակը անաս-  
նաբույժ է մեծ ոգիով, այլ ակօթի կերպով պայ-  
քառել՝ հաղթահարելու համար կրօնը և կր-  
թական անասնաբույժները:

Մեր հակակրօնական պրոպագանդը  
մեր կոմունիստական ընդհանուր պրոպագան-  
դի և ագիտացիայի, ՄԱՐՔՍԻ, ԵՆԳԵԼՍԻ,  
ԼԵՆԻՆԻ և ՍՏԱԼԻՆԻ ուսմունքի պրոպա-  
գանդի մասն է: Հակակրօնական պրոպա-  
գանդը և ագիտացիան չպետք է և չեն կա-  
րող կտրվել կուտակցության և խորհրդա-  
յին կառավարության մեզ առաջադրված  
խնդիրներից: Մեր պայքարը հակա-  
պայքար է սոցիալիզմի ն  
հակների համար:

«Ազգային գրադարան



NL0162184